ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Արամ Ռաֆիկի Ավետիսյանի լիազորված անձ Արմեն Քերոբյանը, Զորավան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Արամ Ռաֆիկի Ավետիսյանին պատկանող 07-031-0223-0081 կադաստրային ծածկագրի 0,3273 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա գյուղատնտեսական մթերքների վերամշակման տնտեսություն կառուցելու խնդրանքով: Պահպանելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը՝ ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների և ներառել այն ամենամյա հողային հաշվեկշռում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Արամ Ռաֆիկի Ավետիսյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին որոշման ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան